ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ԳՀԱՊՁԲ-17/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **04 -ը հուլիսի 2018թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԻՆԺԳԱՐԱՆՏ» ՍՊԸ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Վարդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 22.12.2017թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-17/4-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով անշարժ գույքի գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) հանձնել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված անշարժ գույք (այսուհետև՝ Օբյեկտ)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Օբյեկտը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **63,720,000 (վաթսուներեք միլիոն յոթ հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Սույն Համաձայնագրով Գնորդի կողմից նախատեսվում է կանխավճար՝ Համաձայնագրի գնի 100%-ի չափով, որը Պատվիրատուն փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ Համաձայնագիրը կնքելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ : Կանխավճարի մարումը կիրականացվի հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, անշարժ գույքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՁՍՊ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035020
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ինժգարանտ» ՍՊԸ
ք. Երևան, Ն. Շենգավիթ 4-րդ փ., 51 տ
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 25000108500110
ՀՎՀՀ 02229376
տնօրեն

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-17/4-1 պայմանագրին կից
N 2 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/
1	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	10,620,000	10,620,000
2	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	10,620,000	10,620,000
3	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	10,620,000	10,620,000
4	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	10,620,000	10,620,000
5	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	10,620,000	10,620,000
6	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	հատ	1	10,620,000	10,620,000
	Ընդամենը				**63,720,000**

Անշարժ գույքի հանձնումը պետք է իրականացվի Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մինչ 2019թ. դեկտեմբերի 20-ը:

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-17/4-1 պայմանագրին կից
N 2 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝					
			հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ,քան 25.12.18թ
1	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/471/10/2	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000
2	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/472/10/2	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000
3	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/473/10/2	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000
4	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/474/10/2	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000
5	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/475/10/2	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000
6	Անշարժ գույք /1 սենյականոց բնակարան/	44211130/476/10/2	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000	10,620,000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական տեսքով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՉԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԻՆԺԳԱՐԱՆՏ» ՍՊԸ
տնօրեն

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

«29» 06 2018 թ. N 1865/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 18-0034

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆԺԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի միջև 22/12/2017թ-ին կնքված Պետության կարիքների համար անշարժ գույքի առուվաճառքի N ԳՀԱՊՁԲ-17/4-1 պայմանագրից բխող պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման ապահովում:
2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) ՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 63,720,000.00 ՀՀ դրամ (վաթսուներեք միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված թիվ 900011035020 գանձապետական հաշվին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքը գործում է 2018 թվականի հունիսի 29-ից մինչև 2020 թվականի փետրվարի 10-ը ներառյալ:
5. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել:
6. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը՝ Երաշխավորված պարտավորությունների խախտումը հիմնավորող կից փաստաթղթերի հետ ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
7. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

Գլխավոր հաշվապահ Սեդրակ Բաղդասարյան